# Համարձակ ԲԱՐԻ եղեք:

Ես վառում եմ իմ լույսը՝ բարի լինելով ուրիշների հանդեպ:

**Ողջույն:**
Ես Կլաուդիան եմ և ապրում եմ Ավստրալիայում:



Կլաուդիայի եղբայր Թայլերը

**Ես պաշտպանում եմ մյուսներին**

Դպրոցում իմ դասարանցի մի տղա դժվարանում է սովորել: Ես նրան պաշտպանում եմ, երբ մարդիկ նրան ծաղրում են և օգնում եմ նրան դասարանում, երբ նա կարիք է ունենում: Ուսուցիչս ասում է, սա միակ տարին է, որ նա զգում է, [այդ տղան] իր դասարանի մի մասն կազմում:





**Իմ փոքրիկ արջուկը**

Երբ ուսուցչուհուս քեռին մահացել էր, նա շատ տխուր էր: Նա չգիտի Եկեղեցու մասին, այսպիսով ես ասացի նրան, որ Երկնային Հայրը սիրում է նրան: Ես նրա համար մի քարտ պատրաստեցի և ասացի նրան, որ նա նորից կտեսնի իր քեռուն: Ես տվեցի նրան իմ փոքրիկ արջուկը՝ օգնելու նրան հաղթահարել տխուր ժամանակները:



**Բախտավոր ընկերներ**

Իմ հարևանուհի Օլիվիան դժվարանում է քայլել, խոսել և լսել: Օլիվիայի մայրիկն ասում է, որ Օլիվիայի բախտը բերել է, որ ինձ նման ընկերուհի ունենի: Իմ բախտը նույնպես բերել է:



**Երգելը և Սուրբ Հոգին**

Ես սիրում եմ երգեր երգել *Մանկական երգարանից*: Իմ ընտանիքն ասում է, դա օգնում է նրանց զգալ Սուրբ Հոգին: Սուրբ Հոգին իմ մեջ ջերմ զգացում է արթնացնում:

**ԻՆՉՊԵ՞Ս ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՓԱՅԼԵԼ:**

ՀԱՄԱՐՁԱԿ ընկերություն արեք մեկի հետ, ով շատ ընկերներ չունի:

ՀԱՄԱՐՁԱԿ օգնեք ձեր հարևանին:

ՀԱՄԱՐՁԱԿ որևէ ընկերոջ եկեղեցի հրավիրեք:

ՀԱՄԱՐՁԱԿ երգեք:

ԿՈԱԼԱՅԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ GETTY IMAGES



**ՈՒՂԱՐԿԵՔ ՄԵԶ ՄԻ ԱՍՏՂ:**

Ինչպե՞ս եք թույլ տալիս, որ ձեր լույսը շողա, ինչպես Հիսուսն է խնդրել մեզ անել: Էլ-փոստով ուղարկեք ձեր աստղի մի նկար և ձեր պատմվածքն ու լուսանկարը ձեր ծնողների թույլտվության հետ liahona@ldschurch.org: